Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կըհրատարակուի այժմեան գիրքով և նոյն ծրագրով։ Թերթը կրստանայ «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ։

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»՝ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԱԶԴ

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» համարները՝ բացի Թիֆլիզից հատով վաճառվում են նաև հետևեալ տեղերում.

Բագու. պ. Սարգիս Ջիրագեանցի գրավաճառանոցում։

Ալեքսանդրապօլ. «Շիրակ» գրավաճառանոցում։

Գանձակ. պ. Աղայ Աղայեանցի գրավաճառանոցում։

Նոյն տեղերում ընդունվում է նաև բաժանորդագրութիւն, այլ և յայտարարութիւններ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» մէջ տպելու համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական թատրոնի երեսունհնգամեայ տարեդարձը։

Թատրոնի գործի ապագան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Յակոբ Աբլսողոմեանի թոշակների կանոնագրութեան գործը։ Վանից։ Ախալցխայից։ Արմաւիրից։ Խօլերան Բելօկանի և Կախէթի գիւղերում։ Թիֆլիզի պ. նահանգապետի շրջաբերականը։ Մանկավարժութեան պասաւանդութիւն գիմնազիական դպրոցներում։ Բարձրադոյն Դրան առաջին պարահանդէսը։ Խարկովի համալսարանի 1893 թուի հաշիւը։ Աստուածաբան Թորոս Ջուղայեցի։ Հանրածանօթ Ս. Էֆ. Կիւլպենկեան։ Նուէրներ չքաւորների համար։ Լազարեան ճեմարանի տեսուչ պ. Քանանեանի պարգևատրութիւնը։ Պարսկական հայերը։ Նամակ Մոսկուայից։ Նամակ Ախալցխայից։ Ժողովրդական լուսաւորութիւնը ռուսաց գիւղերում։ Հայ թատրոնի 35-ամեակի տօնուելը Բագւում։ Ձալէթ գիւղի հռչակաւոր վանքը։

ԳԻՏՈՒԹԻՒՆ և ԱՐՈՒԵՍՏ.

ՖԷԼԻԵՏՕՆ.—Սուտը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Լեզուներն արագ ուսուցանելու նոր մեթոդ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԵՐԵՍՈՒՆՀՆԳԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԸ։

Վաղուց արդէն հայկական թատրոնը չէր տեսել այսպիսի շքեղութիւն. վաղուց հայկական բեմն այնքան գրաւիչ չէր հանդիսացել, որքան անցեալ հինգշաբթի։

Ցերեկուան պէս պայծառ լուսաւորուած դահլիճը զարդարուած էր ռուսական եռանդոյն դրօշներով, օթեակների ճակատին փայլում էին հայ բեմի աստղերի անունները 1858 և 1893 թուականների մէջ։ Երեկոյթի ծրագիրը ճոխ էր և բազմազան, գործող անձինքների թւում կային մեր բազմացեղ երկրի բոլոր ազգերի ներկայացուցիչները։

Կովկասեան Փարիզն այսօր երկու պարախաղի (օպերէտ) բեմ ունի, ուր դափնիներ են քաղում եւրոպական վաղուց յայտնի երգչուհիները. մեր քաղաքում ծաղկում են ռուսական և վրացական թատերախաղի բեմերն իրանց փայլուն աստղերով։

Հայկական բեմի 35-ամեայ տարեդարձի շքեղութեան համար այս բեմերից իւրաքանչիւրն ուղարկել էր իւր ընտիր ներկայացուցիչները։

Թիֆլիզի հայ հասարակութեան ընտիր ներկայացուցիչները, ծաղման, գրամի և կրթութեան ազնուականութիւնն եկել էր մահամերձ հայ թատրոնի տարեդարձին ներկայ լինելու։

Թիֆլիզի հայ հասարակութիւնը միշտ վեհանձն է, նա իւր մոռացուած բարեկամներին երբեմն այցելել գիտէ։

Այս անգամ գոնէ հասարակութիւնը կատարել էր իւր պարտքը։

Հայ բեմի ղեկավարներն ու դերասանները, որ այս տարի կրկնակի սառնամանիքի խստութեան տանելու են դատապարտուած, աշխատել էին եթէ ոչ որակով, գոնէ քանակով գրաւել հասարակութիւնը։

Երգ, արտասանութիւն, կենդանի պատկեր, ներկայացումն, դասախօսութիւն, մի կատարեալ թատերական տօնավաճառ էին կազմել նրանք, ուր պիտի լսուէին ամենայն տեսակ բարբառներ, ռուսերէն, վրացերէն, ֆրանսերէն, թուրքերէն և մի քիչ էլ հայերէն։

Այսպիսի խոստումներին չէր դիմացել Թիֆլիզցի հայի սիրտը, ուստի և թատրոնում ոչ մի ոտնկայի տեղ պարապ չէր մնացել։

Երեկոյթի առաջին բաժանմունքը նուիրած էր տարեդարձին. հայ թատրոնի 35-ամեայ հակիրճ պատմութիւնը կարդաց պ. Ա. Երիցեանը, բոլոր մեր հասարակական գործիչների և գործերի պատմութեան հմուտ հետազօտողն ու յոբելեանների պատմութիւններ շարադրողը։

Ռուսական բեմի ղեկավար և Թիֆլիզի հասարակութեան թատերական ամենատեսակ հակումներին գոհացումն տուող պարոն Ֆորկատուին կարդաց մի ոտանաւոր հայ բեմի բարգաւաճման նուիրած, ուր յիշվում էր մեր միակ թատերագիր Գ. Սունդուկեանի ջանքն ու խնամքը թատրոնի մասին և այն հովանաւորութիւնը, որ հայ թատրոնն արել է յիշեան Ն. Ամատունուն...

Վրացոց բեմի համակրելի և տաղանդաւոր դերասան Աբաշիձէն հետևեց պ. Ֆորկատուին և կարդաց մի բանաստեղծութիւն վրացերէն։

Սրան յաջորդեց պարոն Լասսալը, որ գեղեցիկ կերպով արտասանեց մի ֆրանսիական ոտանաւոր։

Այս երեք պատուոյ հիւրերը ևս մի մի դափնէ պսակ քաղեցին հայ բեմից և վարձատրուեցան բուռն ծափահարութիւններով։

Վերջապէս լսուեցաւ և հայերէնը. պարոն Պետրոսեանը կարդաց պ. Թումանեանցի մի բանաստեղծութիւնը, որ նուիրած էր հայ բեմին։

Ներկայացման երկրորդ բաժանմունքը կազմում էր «Պալալ Ղաղօն», որին իբրև ներածութիւն կցած էր մշեցի հայ պանդխտի երգը. այդ երգըն ասաց պ. Ա. Յակոբեանը, նոյնպէս մի թատրոնական հնութիւն։ Կիւկիւլի դերը լաւ կատարեց պ. Սարգարեանը. ափսոս որ արագ էր խօսում և հանդիսատեսներն առանց այն էլ դժուարիմանալի մշեցոց բարբառից քիչ բան հասկացան։

«Պալալ-Ղաղօն» իբրև անցեալի յիշողութեան մի գեղեցիկ տեսարան էր այդ երեկոյթի համար. պ. Տէր-Դաւթեանը կենդանացրեց հին քաղքցու տիպը և բուռն ծափահարութիւններ կորզեց հասարակութիւնից։

Երրորդ բաժանման սկզբումը երգեց տիկին Լասսալը և մի փունջ ստացաւ։

Սրան հետևեց տ. Մօնբազօնը, որ իւր համակրելի ձայնով գրաւեց հասարակութեանը, որին էնտուզիազմը ծայրահեղութեան հասաւ, երբ երգչուհին դաշնամուրի նուագակցութեամբ երգեց հայերէն «Ալ-ձեանակը»։ Ամբողջ դահլիճը ծափահարելով կրկնել տուաւ այդ երգը, որի մայրենի հընչիւններն ու գեղեցիկ եղանակը հասարակութեանը կատարեալ վայելչութիւն պատճառեց։

Տաղանդաւոր երգչուհին մեծ յաջողութեամբ էր արտասանում հայերէն բառերը, միայն «խեղճ» բառն արտասանել չկարողացաւ և հասկանալի է. ինչո՞ւ պէտք է ֆրանսիացին խ ե ղ ճ բառն արտասանել սովորի հայերէն լեզուով...

Ափսոս որ վարագոյրն այստեղ չիջաւ և ներկայացումը վախճան չառաւ։

Ներկայացրին «Հաջի Սուլէյման» անունով մի կարկատան, որ հասարակութեան շատ մասին անհասկանալի էր և իւր հակագեղարուեստական բովանդակութեամբ անհաճելի ու տաղտկալի։

Այդ հատուածը կարող է Թաւրիզում կամ շատ-շատ Բագւում հասկանալի լինել և միտք ունենալ, իսկ Թիֆլիզում դրա բեմ հանելն առնուազն անխորհուրդ էր։

Անհամբեր հասարակութիւնը վարագոյրն իջնելուն պէս հեռացաւ դահլիճից չսպասելով կենդանի պատկերներին։

Այսպէս տօնեց հայկական բեմը իւր 35-ամեայ տարեդարձը։ Երեկոյթի արտաքին շքեղութիւնը և ներքին բազմազանութիւնը ներդաշնակ էր բովանդակութեան հետ։

Այն հասարակութիւնը, որ ներկայ էր հինգշաբթի օրը, ինչ տպաւորութիւն տանէր իւր հետ։ Այդ տպաւորութիւնը կարող էր միայն այն լինել, որ օտարները յարգում են մեր բեմը, որ մենք կարող ենք շքեղ երեկոյթներ տալ, սակայն որ մենք դեռ բեմ չունինք. . . բայց մի՞թէ այդպէս է. ինչու եղածից էլ աղքատ երևել։ «Պալալ-Ղաղօն» անցեալը յիշեցրեց, իսկ ո՞ւր էր ներկայի յուշարարը, մի՞թէ «Հաջի Սուլէյմանը»։

Թատրոնից սառած հասարակութեան պէտք էր ցոյց տալ, որ հայ բեմի վրայ մաքուր հայերէնով խաղացվում են եւրոպական թատերախաղեր։

Ահա թէ ինչու այդ օրուան մուտքը թատրոնի համար մենք դեֆիցիտով վերջացած ենք համարում։

Հայկական թատրոնի երեսունհնգամեայ տարեդարձի երեկոյթին ներկայ էին հայ բեմի անձնուէր մշակները, հայ բեմի սիրահարները, հովանաւորողներն ու հովանաւորեալները, իսկ ինքը՝ այդ երեսնամեայ թատրոնի մարմնացումը—Գէորգ Չըմշկեանը բացակայ էր ռահւծիծ։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՊԱԳԱՆ

(Բաց նամակ Թիֆլիզի եւ Բագուի հայ հասարակութեան)։

Անցեալ հինգշաբթի, յունվարի 28-ին հայ թատրոնի ղեկավարները տօնեցին հայոց թատրոնի 35-ամեակը։ Այդ առիթով մի քանի խօսակցութիւններ տեղի ունէին՝ թէ այդ օրը թատրոնի գոյութեան 35 ամեակը չէ, թէ պէտք էր յունիսին տօնել, սակայն այդ մեր խնդրին չէ վերաբերում. իմ ցանկութիւնս է կըրկին անգամ այդ յոբելեանի առիթով դիմել մեր երկու քաղաքի հայ հասարակութեան, որ նա զարթնէ քնից և մի հիմնաւոր գործ կազմակերպէ թատրոնի համար։ Թիֆլիզը փառաւոր խմբի ժամանակ և այս երկու վերջին տարուայ մէջ էլ ցոյց տուեց, որ առանց դեֆիցիտի չէ կարող պահել թատրոնը, և այդ զարմանալի չէ, քանի որ արքունական թատրոններն իսկ մայրաքաղաքներում միշտ մեծ դեֆիցիտ ունին։ Օդեսսայի Քաղաքային Վարչութիւնը ձրի տալով թատրոնը և ահագին օժանդակութիւն անտրպենորին, դարձեալ վնաս է անում. Եւրոպայում բոլոր քաղաքները տալիս են ձրի թատրոն և օժանդակութիւն։

Մեզ հայերիս սպասել այդպիսի բան անկարելի է Թիֆլիզ քաղաքից, և որով. հետև մէկ քաղաքի համար ծանր է խումբ պահել—ուստի հարկաւոր է որ մեր երկու գլխաւոր քաղաքները Թիֆլիզը և Բագուն միանան և մի օրինաւոր խումբ պահեն։ Այսպիսով խումբը կարող է 4 ամիս խաղալ Թիֆլիզ, 3 ամիս Բագու, մի ամիս Բաթում։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍՈՒՏԸ *)

Գ.

ՍՈՒՏԸ ՄԵՐ ԿԵԱՆՔՈՒՄ

«Der Schnee ist eine erlogene Reinlichkeit.»
(Ձիւնը ստած մաքրութիւն է)։
Գէօթէ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿ

Ստի արտայայտութիւնն սկսվում է լեզուի բացուելով, թէպէտև կան անբարբառ ստեր։

Ո՞վ կարող է ենթադրել, որ այսօրուան մանկական թոթովանքի կիսից աւելին սուտ է։ Մանուկն սկսում է անկապ ձայներ արտասանել, արդէն իսկ այդ աննշան ձայներին մենք սկսում ենք նշանակութիւն վերագրել. իւրաքանչիւրն այդ ձայներից հրճուանք է պատճառում մեզ. այդ հրճուանքն արտայայտում ենք և ուրիշներին, հաւատացնելով որ «դեա-դեա-դեա» հնչող մանուկը «դեադեա» է ասում, «մա-մա-մա» հնչող մանուկը իւր մօրն է անուանում և այլն, մինչ հաստատապէս գիտենք, որ մանուկն այդ ձայներից և ոչ մինը գիտակցօրէն չէ արտասանում, ուստի նրանք աննշանակ են։

Ահա մի անմեղ անձնախաբութիւն, որին անձնատուր է ամեն մի ծնող։ Բայց ահա անցնում է այդ անմեղ անձնախաբութեան շրջանն ու սկսում յանցաւոր անձնախաբութիւնը։

Մենք լուսաւոր դարու զաւակ ենք, մենք XIX դարու կրթեալ անդամ ենք կամենում լինել, ուստի և պէտք է մեզ վրայ երևի այդ դարու յատկանիշը։ Այդ յատկանիշներից մեծագոյնն է տոհմային յատկանիշը. հին դարերը սուրբութեան դարեր էին արևելքում, միջին դարերը կրօնական էին, իսկ մեր դարը՝ սկսած ֆրանսիական յեղափոխութիւնից ազգային է։

Եւրոպայում ամենայետին ազգերն իսկ, որոնց լեզուի քերականութիւնը հազիւ երկու տարի առաջ է յօրինուած, այժմ կամենում են իրանց լեզուով միայն խօսել թէ տոհմակիցների և թէ օտարների հետ։ Լուսաւորեալ հայը գիտէ այդ և եթէ կամիք նա ամբողջ հատուածներ յառաջ կը բերէ երևելի փիլիսոփաների, պատմագիրների ու հրապարակախօսների գրուածներից այդ սկզբունքն ապացուցանելու համար։ Հարկաւ հոգ չէ՝ եթէ նա այդ սկզբունքները մի որևէ օտար, եւրոպական լեզուով կարտասանէ, որ գիտէ մայրենի լեզուի նշանակութեան յարգը։

Ես շատ շատերից եմ լսել և դեռ լսում եմ, որ մարդս կարող է իւր ազգը սիրել, առանց խօսել իւր մայրենի լեզուով։

Երևի ինձպէս շատերն էլ առիթ են ունեցել այդ ճշմարտութիւնը լսելու և անշուշտ խրատուենք են տուել դրա պաշտպաններին։ Ի՞նչ ասել կուզէ, որ ես կարող եմ իմ ծնողներիս սիրել, բայց խռով լինել նրանց հետ, չը խօսել նրանց հետ. ո՞վ չգիտէ, որ ես կարող եմ որևէ կերակուր սիրել, բայց չուտել այդ, որովհետև վնասակար կը լինի առողջութեանս կամ կը ծանրաբեռնէ ստամոքսս։

Ահա մի հիմնական սուտ, որ գոյութիւն ունի մեր կեանքում և որի հետ կապակցուած են անթիւ այլ ստեր։ Սուտ սկզբունքի վրայ հիմնուած մի այլ սուտ ծնեցնում է այն կրկնակի սուտը կամ երկրորդ աստիճանի սուտը, որ յիշեցի արդէն նախնթացաբար։

Սկզբնական սուտն այն է, որ մենք կարծում ենք, թէ կարելի է մայրենի լեզուն պլատոնական սիրով սիրել։ Սրանից ծնած սուտն արդէն այն հասարակական և երկրորդ աստիճանի սուտն է, որ մենք աշխատում մենք մայրենի լեզուի տարածման նպաստելու։

Զարմանալի ինքնախաբութիւն. կամենում ենք որ մեր մայրենի լեզուն տարածուի, ճոխանայ և իւր իրաւունքներին տիրանայ, իսկ մենք ինքներս կարևոր չենք համարում ուսանելու։ Ահա ստի սուտը. մենք նման ենք այն բժիշկներին, որ ուրիշներին թեթևութեամբ այն թունաւոր դեղերն են տալիս, որ իրանք գործ դնելուց հրաժարվում են։ Ահա սկսում է այս ստի սուտը իւր ընթացքը մեր կեանքի առաջին շրջանից և հասնում է վերջինին։

Մանկական լեզուի կապերը բացուելուն պէս մենք հոգս ենք տանում, որ նա մի քանի եւրոպական բարբառներ սովորի, մենք ինքներս փոխում ենք մեր լեզուն, թէպէտ օտար լեզուներ ևս չգիտենանք, բայց այնուամենայնիւ անկիրթ և կոպիտ դայեակների խօսած լեզուն նախապատւում ենք և մեր մանկան հետ օտար լեզուով ենք խօսում։ Բայց այս չէ սուտը մեր ընտանեկան դաստիարակութեան, այս ընդհակառակն ճշմարիտն է, սուտն այն է, որ մենք այս ճշմարտութիւնն ամեն վայրկեան հերքում ենք հրապարակաւ։ Հերքման փաստեր ունենալու համար մի այլ սուտ ևս հնարում ենք. մանկանը, որ թութակի է նման այդ հասակում, սովորեցնում ենք թութակօրէն մի քանի հայերէն բառեր—«հայրիկ», «մայրիկ», «հաց», «փող», «տուր» և վերջապէս «ես հայ եմ» և հանդիսաւոր վայրկեաններին, մանուկ դերասաններին տան դահլիճի բեմն ենք հանում և հիացնում մեզպէսներին։ Ամենքս գիտենք այդ ներկայացման արժէքը և ամենքս էլ ցոյց ենք տալիս, որ մենք խաբուած ենք։ Ահա մի հասարակական ստի սուտ կամ երկրորդ աստիճանի սուտ։

«Մանկական հասակին յատուկ պայմանաւորուած» (conventionelle) սուտը շատ հարուստ է, միայն վերը յիշածը չէ։

—«Դու ինձ սիրո՞ւմ ես. այո, տես շաքար կը տամ քեզ»։

—Այո սիրում եմ, ո՞ւր է շաքարը.—(մենք չենք հասկանում, կամ չենք ուզում հասկանալ, որ մանուկն ասում է՝ թէ «շաքարն եմ սիրում»)։

—Այս կօշիկն ո՞վ առաւ քեզ համար, այս խաղալիկն ո՞վ տուաւ, այս ձին ո՞ւմ բերածն է...

—Հայրիկի, մայրիկի, քեռու...

—Սիրո՞ւմ ես հայրիկին. մայրիկին. քեռո՞ւն...

—Այո սիրում եմ. էլի կը բերէ խաղալիկ։

—Ի՞նչ խելօք տղայ է, ինչպէս երախտագէտ է։

—Դու խելօք կը մնաս տանը, տես դայեակը քեզ շաքար կը տայ։

—Այո, կը մնամ, բայց եթէ շաքար չտայ, էն օրը խաբեց ինձ։

—Ի՞նչ խելօք երեխայ է, ասում է միամիտ մայրն ու համբուրում իւր որդուն չնկատելով անձնախաբութիւնը։

—Այս ո՞վ կոտրեց, դու՞ կոտրեցիր. ասա թէ չէ կը ծեծեմ և այլն։ Մեր ամեն խօսքը, խրատը, սիրոյ արտայայտութիւնը պայմանական և գնելի է որոշ հատուցմամբ, էլ ինչու ենք զարմանում, որ մեր երեխայքն էլ ամեն ինչ գնովի են համարում։

Սուտն է մեր դաստիարակութեան ղեկավար սկզբունքը։

*) Տես «Արձագանք» № 7։

Այդպիսով 8 ամսով վարձելով դերասանուհիններին և դերասաններին, սոքա կարող են իրանց աւելի ապահով դրութեան մէջ տեսնել, և ուրեմն ամբողջապէս նուիրել իրանց թատրոնական գործին։

Ամենքիս յայտնի է որ մեր ռեպերտուարը շատ սահմանափակ է, հեղինակութիւններ չունինք, պատմական պիեսները շատ թոյլ գրուածքներ են—ուստի մնում է դիմել թարգմանութեանց. Թարգմանիչները չպէտք է ժամանակ կորցնեն ամենայն պիեսս թարգմանելու հայոց բեմի համար, այլ լաւ մտածեն թարգմանութեան վրայ և յարմարացնեն մեր կեանքին և մեր խմբի ոյժերին։ Խումբը Թիֆլիզում խաղալով 20 անգամ, նոյն պիեսները կարող է կրկնել Բագու, և այլ քաղաքներում և այդպիսով դերասանները միջոց կ'ունենան ուսումնասիրել և կատարելագործել իրանց խաղը. Թէ չէ դերասանը մի անգամ խաղալով և ինքը տեսնելով իւր սխալմունքը հնար չէ ունենում ուղղել միւս խաղին, որովհետև ամենայն պիեսս մի անգամից աւել չէ տրվում սեզոնում։

Ֆրանսիացի արուեստագէտ պ. Լասսալը զարմացաւ երբ տեսաւ 4 փորձից յետոյ խաղացուած «Դարբնապետ» պիեսը, որովհետև նոյն պիեսը Փարիզի Gymnase թատրոնում 100 փորձ է ունեցել և 250 անգամ միայն նորան Լասսալն է խա- [illegible] շքեղութեան մասին չենք էլ մտածում, որովհետև եթէ մեր թոռան թոռները տեսնեն այդպիսի բան հայոց ապագայ բեմում, դրանից էլ պէտք է շնորհակալ լինել։

Մի շատ արդարացի և միևնոյն ժամանակ անարդարացի բողոք է լսվում մեր հասարակութեան մէջ թատրոնի դէմ. «կանայք չկան», լսվում են ամեն կողմից։ Ճիշդ է. դորա վրայ կարելի է աւելացնել՝ «և դերասանք չկան» (մինչև երեքով չորսով բան կը դառնայ)։ Բայց սպասեցէք, խնդրեմ, ինչպէս երևան գան դերասանուհիք և դերասաններ, երբ նոցա մէջ պահանջ չկայ. ամենայն բան միայն այն ժամանակ կարող է աշխարհ գալ, երբ պահանջ կայ. Թատրոն չկայ, դերասաններ էլ չեն լինի. Թատրոն կը լինի՝ դերասանուհիք էլ և դերասաններ էլ կամաց-կամաց կ'երևան. պէտք է զոհաբերութեամբ և աշխուժով պահպանել հայոց թատրոնը 5—6 տարի և. այն ժամանակ շատ օրիորդներ և երիտասարդներ իրանց կը նուիրեն բեմին. մինչև ուսումնարանները բացուելուց առաջ շատ վարժուհիք կային. պէտք է վերջապէս այդ գործին նայել լայն հայեացքով. պէտք է թատրոնին օգնեն հայերը ինչպէս իրանց դպրոցներին. չպէտք է ամենքը ձեռքերը լուանան և յետ քաշուեն։

Թող Բագուն և Թիֆլիզը ընտրեն երեք-երեք մարդ և յետոյ այդ վեցը լաւ խորհրդակցելուց յետոյ կազմեն մի օրինաւոր խումբ Կ. Պոլսից բերելով դերասանուհիք և դերասաններ, վճռեն՝ որ ամիսները խումբը որտեղ խաղայ. մանաւանդ որ այժմ միւս սեզոնի համար Թիֆլիզը կ'ունենայ մօտ 1500 ռ. պատրաստի գումար. Թող Բագուի մեր եղբայրներն էլ այնքան կամ աւել հաւաքեն և գործը տան լաւ ղեկավարի ձեռք և՝ օն անդր առաջ։

Ինչպէս Թիֆլիզը տարին մի պարահանդէս է տալիս թատրոնի օգտին, նոյնը կարող են Բագւում անել ամեն տարի. վրաց երեկոյթը Բագւում տուել է մօտ 4000 ռուբլի, մինչդեռ այդ հայաբնակ քաղաքում հայերը չեն կարող նոյնպէս մի երեկոյթ սարքել, որ տայ գոնեա 2000 ռ.։ Ամեն բան շատ հեշտ է, եթէ ինեցիատորներ լինին և սրտով կպչեն գործին. բայց մենք հայերս սիրում ենք «էհ աւսել և «մեր գործը չէ»-ով հեռացնել մեզանից ամեն լաւ գործ։

Վերջին տարուայ զզուելի և տխուր երևոյթն էլ պէտք է հեռացնել թատրոնից. Թատրոնը կուսակցութեան ասպարէզ չէ, այլ ճշմարտութեան ամբիոն, տաճար, որտեղից միմիայն ճշմարտութեան սուրբ գաղափարներ պէտք է լսէ ժողովուրդը։ Ձեռք-ձեռքի տուած գործենք թատրոնի համար և արդարացնենք այն առածը, որ ասում է, «Concordia res parvae crescunt»—այսինքն «համաձայնութեամբ աճում են և փոքր գործերը»։

Գ. Պէտրոսեան։

28 յունվ. 1893 թ.

Թիֆլիզ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈԲ ԱԲԻՍՈՂՈՄԵԱՆԻ ԹՈՇԱԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը իւր մօտակայ նիստերից մէկում քննելու է Յակոբ Աբիսողոմեանի թոշակների հետևեալ՝ 8 կէտերից բաղկացած ծրագիրը։

1) Համաձայն հանգուցեալ պետական խորհրդական Յակոբ Աբիսողոմեանի կամաց, որ յայտնուած է նորա 1889 թ. ապրիլի 27-ին կազմուած և 1892 թուի մայիսի 1-ին նահանգական դատարանից հաստատուած կտակի մէջ, իւր թողած 49,000 ռուբլի դրամագլխի տոկոսիքով հաստատվում են 14 թոշակներ, որոնք կոչուելու են «Յակոբ Աբիսողոմեանցի թոշակներ»։

2) Յիշեալ դրամագլուխը, որ գտնվում է երբև յաւիտենական աւանդ պետական բանկում, աճելու է ապագայում այն գումարի յաւելումից, որ կը գոյանայ հանգուցեալի Բօրժոմի ամարանոցի ծախելուց. կտակով այս ամարանոցի եկամուտը պիտի ստանան հանգուցեալի Յովհաննէս և Գրիգոր Աբիսողոմեան եղբայրները քանի որ կենդանի են։

3) Յիշեալ 14 թոշակները բաժանվում են Թիֆլիզում ծնուած աղքատ երեխաների մէջ հետևեալ կարգով. ա) չորս աշակերտ և չորս աշակերտուհի հայերից. բ) երկու աշակերտ և երկու աշակերտուհի վրացիներից. գ) մի աշակերտ և մի աշակերտուհի վրացիներից։

Ծանօթ. Եթէ դրամագլուխն աւելանալու լինի, աւելանալու է և թոշակաւորների թիւը այս կանոնագրութեան 3-րդ կէտի համեմատ։

4) Թիֆլիզի այն արական և իգական դպրոցների ընտրութիւնը, ուր պէտք է ուսանին Յակոբ Աբիսողոմեանի թոշակները, վերապահվում է Թիֆլիզի քաղաքագլխին, իսկ թոշակաւորների ընտրութիւնը Թիֆլիզի քաղաքային վարչութեան։

Ծանօթ. Թոշակների ընտրութեան իրաւունքը պատկանելու է հանգուցեալի Յովհաննէս և Գրիգոր Աբիսողոմեան եղբայրներին քանի որ կենդանի են։

5) Իւրաքանչիւր թոշակի քանակութիւնը որոշվում է 120 ռուբլի, որ և մատակարարվում է համաձայն իւրաքանչիւր դպրոցում եղած կանոնների։

6) Յանուն Յակոբ Աբիսողոմեանի սահմանուած թոշակները ոչինչ պարտաւորութիւններ չեն դնում ապագայում թոշակ վայելողների վրայ։

7) Յակոբ Աբիսողոմեանի այն թոշակաւորները, որոնք յաջողութեամբ կ'աւարտեն իրանց ուսման ընթացքը Թիֆլիզի դպրոցներում, կարող են, եթէ կամենան, շարունակել իրանց ուսումը բարձրագոյն դպրոցներում և այս դէպքում նոքա ստանում են տարեկան 400 ռուբլի։

Ծանօթ. Սկզբում թոշակաւորների թիւը բարձրագոյն դպրոցներում միմիայն մէկ է լինելու։

8) Ստացուած տոկոսների մնացորդները պահվում են քաղաքային վարչութեան մէջ մինչև հազար ռուբլի կազմուելը, և ապա այդ գումարը աւելանում է վերոյիշեալ յաւիտենական աւանդին։

* * *

ՎԱՆԻՑ գրում են արտասահմանի մի լրագրի.—Քօլերան ցարդ հայերէն ամբողջ 100 անձ հազիւ զոհ տարած է, բայց Թուրքերէն 4—500 կարելի է լինի, զի անոնք երբէք կարևորութիւն չեն տար առողջապահական խնամքներու։ Դժբաղդաբար օրինաւոր բժիշկ չկայ այստեղ. բացի ամերիկացի միսիոնար Դոքթօր Րայնոլտսէն, զինուորական 2 բժիշկ կայ միայն. երկուքն ալ Թուրք և տգէտ մարդիկ։ Հայեր ամեն թաղերու մէջ մասնաժողովներ կազմելով դրամ հանգանակեցին աղքատաց խնամելու համար, անոնց ձրիապէս դեղ, սննդարար ուտելիք և այլն մատակարարեցին, այնպէս որ այդ ձեռնարկը մեծ համակրութեամբ և յաջողութեամբ ընդունուեցաւ ժողովրդէն. բայց կառավարութիւնն արգիլեց, ըսելով թէ հարկ չկայ ձեզի այդպիսի բաներ ընելու. պէտք եղածը ինք կառավարութիւնը կընէ, թէև ոչ մի բան ըրաւ։ Այսու ամենայնիւ բարեբաղդ ենք, որ քօլերան ինքնին վերջացաւ։

* * *

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ գրում են մեզ. «Մեր քաղաքային վարչութիւնից հրաւիրուած կին բժիշկ հրէուհի օրիորդ Սօֆիա Կուզմատինեան խնդրագրով ցանկութիւն յայտնեց հայոց դաւանութիւն ընդունել և մեր եկեղեցում մկրտուել։ Սինօդի միջոցով գործն առաջարկուած է երկրիս պ. կառավարչապետին. յոյս ունինք, որ այս օրերս թոյլտուութիւն կըստացուի»։

* * *

ԱՐՄԱՒԻՐԻՑ հաղորդում են «Պրիազ. Կրայ» լրագրին, որ յունվարի 11-ին այնտեղ կայացել է մի երաժշտական երեկոյթ պարահանդէսով յօգուտ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան. հասարակութեան մեծ բազմութիւն էր եկել այդ երեկոյթը, որ սկսուեցաւ «Տէր, պահեա» երգեցողութեամբ։ Երաժշտական մասից յետոյ եղան կենդանի պատկերներ հայկական կեանքից։ Ապա սկըսուեցան պարերը, որոնք տևեցին մինչև 3 ժամը։ Երեկոյթից զուտ արդիւնք է ստացուած 772 ռուբլի։

* * *

Զաքաթալի շրջանի նահանգապետը պաշտօնապէս հաղորդում է, որ Բելօկանի և Կախեթի գիւղերում յունվարի 12-ին 16-ին և 17-ին խոլերայից բռնուել է 6 մարդ, որոնցից 4-ը մեռել են, իսկ 2-ն առողջացել։

* * *

Թիֆլիզի նահանգապետն ամսոյս 28-ին մի շրջաբերական է ուղարկել բոլոր գաւառապետներին, որով առաջարկում է [illegible], աչքի առաջ ունենալով որ խօլերային համաճարակը կարող է նորոգուել։ Գաւառապետները պարտաւոր են ամեն երկու շաբաթը մի անգամ զեկուցանել բժշկական վարչութեան, թէ ինչ է կատարվում այս ուղղութեամբ։

* * *

Մտադրութիւն կայ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրերը, զինուորական դպրոցներում մտցնել մանկավարժութեան դասաւանդութիւն։ Այս ծրագրի հիմնական միտքն այն է, որ երիտասարդ սպաները, որոնց առաջին պարտաւորութիւնն է ուսուցանել նորակոչ զինուորներին, այնքան անպատրաստ են լինում վարժապետութեան համար դասատուութեան եղանակներին անտեղեակ լեզուով, որ շուտով թողնում են իրանց այս կարևոր պարտականութիւնը և այդ յանձնում են ենթասպաներին (ունտէր օֆիցերներին)։ Սոքա էլ ազգի երիտասարդ սերնդի մէջ դրագիտութիւնը մտցնում են փայտի և զանազան համանման միջոցներով։ Չի կարելի մեծ համակրութեամբ չողջունել ռուսաց զինուորական նախարարութեան այս կարգադրութիւնը։

* * *

Յունվարի 19-ին Ս. Պետերբուրգի Ձմերային Պալատի դահլիճներում կայացաւ Բարձրագոյն Դրան այս սեզոնի առաջին պարահանդէսը. Հրաւիրեալ հիւրերի թիւը 3,375 էր։ Գիշերուայ 9 ժամ 30 րոպէին կատարուեցաւ Բարձրագոյն ելքը Մալախիտի ապարանքից դէպի Նիկոլայեան դահլիճը «պօլօնէզի» նըրդաշնակ հնչիւնների երաժշտութեամբ։ Առաջին զոյգը կազմում էին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, ընդ առաջ ունենալով սերեմօնիմէյստրին, գլխաւոր-սերեմօնիմէյստր իշխ. Ի. Ս. Դոլգորուկովին և ստատս-տիկին կոմսուհի Ա. Դ. Ստրոգօնովին։ Երկրորդ զոյգի մէջ անցնում էին Թագաժառանգը Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնայի հետ, ապա Թագաւոր Կայսեր եղբայրները և հարսները, այնուհետև Բուխարայի էմիրը և Յովհան-Ալբերտ Մէկլենբուրգ-Շվէրինի դուքսը և յետոյ կայսերական Տան միւս անդամները և սոցա մէջ Մեծ Իշխան Միքայէլ Նիկօլայեվիչը — Կովկասի փոխարքան։

Երկ որդ «պօլօնէզի» ժամանակ Թագաւոր Կայսրն անցաւ իտալական դեսպանի ամուսին բարոնուհի Մարօկէտտի հետ, Կայսրուհին Թագաժառանգի հետ, Մեծ Իշխան Վլադիմիրը Ֆրանսիական դեսպանի ամուսին կոմսուհի Մօնտեբէլլոյի հետ, Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան աւստրօ-հունգարական դեսպան կոմս Վօլկէնշտեյն-Տրօստբուրգի հետ, Մէկլենբուրգ-Շվէրինի դքսուհի Եղիսաբէթը՝ անգլիական դեսպան Սէր Րօբերտ Մօրրիէրի հետ, օրիորդ Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնան (Թագաւորի դուստրը)՝ օսմանեան հիւպատոս Հուսնի-փաշայի հետ։

Ժամը մէկին ընթրիք կայացաւ. բազմաթիւ հիւրերը տեղաւորուեցան չորս մեծ դահլիճներում և զանազան օթևաններում մինչև ոսկեայ հիւրասենեակը, որ ներքին ապարանքների մասն է։ «Ձինադրօշմի անուանեալ դահլիճում առանձին սեղան էր պատրաստած 31 անձանց համար։ Մէջ տեղը բազմած էր Թագուհի Կայսրուհին և նորա աջ կողմը, նախ՝ Բուխարայի էմիր Սէյիդ Աբդիւլ-Ախատխանը, յետոյ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան, իտալական դեսպան բարոն Մարօկէտտի, այնուհետև մեծ իշխանուհիք և դքսուհիք, դեսպանները և բարձր աստիճան տիկնայք և ասպետներ։ Թագուհու Կայսրուհու բազկաթոռի յետև կանգնած էր կիրգիզ-կալմակների սուլթան՝ ռոտմիստր Աֆենդիե Ի.ովը, որպէս էմիրի թարգման։ Օգոստափառ Տանտէր Թագաւոր Կայսրը՝ իւր հետ ունենալով կայսերական Դրան նախարար կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովին այցելում էր բոլոր սենեակները և դահլիճները և իւր հիւրերից մի քանիսի հետ խօսակցում էր։ Ընթրիքից յետոյ՝ նորից պարեր սկսեցին «վալսով»։ Երկրորդ ժամի սկզբին Նոցին Կայսերական Մեծութիւնք, հրաժեշտ տալով հիւրերին, վերադարձան ներքին ապարանքները։ Շուտով ցրուեցան և հիւրերը։ Ընթրիքից առաջ անգլիական դեսպան Մօրրիէրը՝ անակնկալ հիւանդութեան պատճառով թողեց պարահանդէսը իւր ամուսնու հետ ի միասին։

* * *

ԽԱՐԿՈՎԻ համալսարանի տարեկան հանդէսին կարդացած հաշուից երևում է, որ 1-ն յունվարի 1893-թուի ուսանողների թիւն ընդամենը եղել է 1062. սոցանից մեծագոյն մասը (636) բժշկականութիւն են ուսանում և իրաւաբանութիւն 265,—իսկ փոքրագոյն մասը (38) լեզուագիտութիւն և մաթեմատիքական գիտութիւններ 123։ – Մի գաղափար կազմելու համար թէ որքան պակասում են Ռուսիայում գիտնական ոյժեր, առաջ բերենք այս համալսարանի ազատ մնացած ամբիոնները պրօֆեսօրներ չգտնելու պատճառով։ Խարկովի համալսարանում չկան մասնագէտ դասաւանդողներ հետևեալ գիտութեանց՝ արուեստների տեսութեան և պատմութեան, արևմտեան գրականութեանց պատմութեան, մեխանիկայի, քաղաքային իրաւագիտութեան (гражданскаго права) և քաղաքային դատավարութեան (судопроизводство), վիրաբուժական պատօլօգիայի, բժշկական քիմիայի, բժշկականութեան պատմութեան և էնցիկլօպեդիայի. . .

* * *

Դուցէ շուտով առիթ ունենանք կալկաթայից թղթակցութիւններ տպագրելու այնտեղի հայերի վիճակի մասին. Մեզ խոստացել է յօդուածներ ուղարկել Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի հայկական մասի նոր տեսուչ յայտնի աստուածաբան Թորոս Ջուղայեցին։

* * *

Կ. Պոլսում նորերումս վախճանուել է Սարգիս էֆենտի Կիւլպենկեանը, այն հանրածանօթ վաճառատան գլխաւոր ներկայացուցիչը, որ ճիւղեր ունի Փոքր Ասիայի համարեա թէ բոլոր քաղաքներում և Եւրոպայի գլխաւոր կենտրոններում։ Նորան ժառանգում է իր որդին պ. Գալուստ Կիւլպենկեանը, ֆրանսիական լեզուով յօրինուած յայտնի ճանապարհորդութեան յարգելի հեղինակը։

* * *

Այս ձմերային օրերին չքաւորներին նպաստներ մատակարարելու համար Քաղաքային Վարչութեան ընտրուած յանձնաժողովը խնդրում է մեզ յայտնել, որ նա ստորագրութիւն է բացել և նուէրներ է ընդունում այն անձինքներից, որոնք կը կամենային օգնութեան ձեռք մեկնել Թիֆլիզի աղքատ բնակիչներին, որպէսզի այս ճանապարհով մի օրինաւոր գումար կազմուի, որովհետև քաղաքիս չքաւորների թիւը շատ մեծ է։ Օգնութիւն խնդրողների իսկական չքաւորութիւնը հաստատելու գործը թեթևացնելու համար, յանձնաժողովը որոշել է նպաստներ տալ այն խնդրատուներին, որոնք քաղաքային վարչութեան երկու իրաւասուների վկայութիւն կը ներկայացնեն։

* * *

Սուլթանը մէջիտիէ պատուանշանի երկրորդ աստիճան է շնորհել Լազարեանց արևելեան լեզուների ճեմարանի տեսուչ պ. Քանանեանցին։

* * *

ՊԱՐՏԻԶԱԿԻ ՀԱՅԵՐԸ

Նիկոմիդիոյ գաւառին հանդէպ, գրեթէ երկու ժամ հեռի, մի քանի գեղագուարճ բլրոց շղթայներու վրայ հիմնուած է Պարտիզակ։ Գիւղաքաղաքին այլ և այլ կողմերէն գետակներ կը գալարեն իրենց արծաթ ալիքներ. երեք քառորդ ժամ հեռուն Օվաճըգի դէտը կ'ընթանայ սատարելու Ս.րսլանպէկի մօտը գտնուող այն մեծ սաւեգործարանին, որ ի Թուրքիա գտնուող գործարանաց հրաշակերտը կը նկատուի ըստ բազմաց վկայութեան։ Գիւղաքաղաքին արևելեան կողմը բլրի մը գագաթին վրայ քայքայուած կը մնայ Ս. Մինասի մատուռն, որ տարին մի քանի անգամ ուխտաւորներ կ'ընդունի։

Ի Պարտիզակ կը բնակին 4—5000 հոգիք, ամենքն ալ հայ։ Գիւղաքաղաքին մէջ կայ Ս. Յակոբ փառաւոր եկեղեցին և թաղային հողաշէն վարժարանն՝ որոյ արտաքին կողմն խոշորատար վերտառութիւն մը կայ զոր կարդացի տասը րոպէ հեռուէն, և թերևս ինձմէ սրատես մը քառորդ մը հեռուէն կարդայր, այդ էր «Ազգային վարժարանի վերտառութիւնը։ Նոյն վարժարան լաւ դաստիարակութիւն մը կ'աւանդէ իւր մէջ գտնուող 800-ի չափ երկսեռ աշակերտաց և կը համարձակիմ ըսել թէ Պոլսոյ և գաւառաց թաղային վարժարանները չունին այսպիսի բարւոք վիճակ մը ի մասին դաստիարակութեան, և Պարտիզակցիք նոյն բարւոքումը կը պարտին Եղիշէ Ծ. վարդպ. Դուրեանի բազմարդիւն ջանից։ Գիւղաքաղաքին մէջ կայ նաև ամերիկեան մասնաւոր վարժարան մը, որոյ համար կ'ըսեն թէ ուսեալ պատանիներ նուիրած է տեղացւոց։ Ցիրաւի Պարտիզակցիք բարեբաղդ են, զի առիթ ունին օգտուելու. սակայն սոյն վարժարանք կը դնահատուին։ Եթէ փողոցներէն անցնիս, կը տեսնես դատարկապորտ տղայոց խումբեր. որք կը թափառին օրն ի բուն. ասոր պատճառը ծնողաց դաստիարակութեան նկատմամբ ունեցած ցուրտ անտարբերութիւնն է։ Ցաւալի է նաև ըսել թէ Եղիշէ Ծ. վարդապետ Դուրեանի բաժանումէն ի վեր Պարտիզակցիք կը մնան անհովիւ. թէև վիճակին առաջնորդ Ստեփանոս եպսկ. Յովակիմեան երբեմն կ'այցելէ, սակայն ինչ որ ալ ըլլայ, այսպիսի տեղւոյ մը համար հովուի մը պէտքն անհրաժեշտ է. այս մասին կրօնական փոխանորդի ուշադրութիւնը կը հրաւիրենք։

Տեղացիք խիստ աղքատ են. իրենց գլխաւոր զբաղումներն են շերամաբուծութիւն և երկրագործութիւն. ասոնց առաջինը, տեղացոց համար խիստ շահաւէտ եղած է, որովհետև գիւղաքաղաքին մէջ կը գտնուին մի քանի մետաքսի գործարաններ յորս հարիւրաւոր կանայք կ'աշխատին թէ ամառ և թէ ձմեռ. երկրագործութիւնը խիստ անկեալ վիճակ մ'ունի, այնպէս որ ցորեն և այլն մօտակայ յոյն գիւղերէն կը բերուին. իրենք միայն կը մշակեն այգիներ և բազմաթիւ թթենիք։

(„Արևելք")

* * *

ՄՈՍԿՈՒԱ, յունվարի 23-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Անցեալ տարուայ դեկտեմբերի 29-ին Մոսկուայից անցաւ դէպի Ս. Պետերբուրգ մեր, գրեթէ, միակ ուսումնական երաժիշտ՝ պ. Մակ. Եկմալեանը, որ ինչպէս յայտնի է, աւարտելով իւր ժամանակին Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան, մի քանի տարի դեռ մնաց մայրաքաղաքում իւր ուսումը կատարելագործելու համար։

Այժմ, ինչպէս տեղեկացանք ճիշդ աղբիւրներից, պ. Եկմալեանը մեր ս. պատարագի երգեցողութիւնը ձայնագրել ու մշակել է երեք տեսակ.

1) Եռաձայն, արական երգեցիկ խմբի համար, երկու տենոր և մէկ բաս։

2) Քառաձայն, խառն խմբի համար, ուր պիտի լինին դիսկանտ, ալտ, տենոր և բաս։

3) Քառաձայն արական խմբի համար, երկու տենոր և երկու բաս։

Առաջկայի այս տեսակ մշակութիւնն այն յարմարութիւնն ունի, որ մեր պատարագի երգեցողութեան դասաւանդութիւնը շատ հնարաւոր է կացուցանում եկեղեցական-ծխական ուսումնարաններում, ուր բոլոր չորս ձայները երբեմն դժուար է լինում գտնելու և հեղինակը կարծես նախատեսել է այդ իրողութիւնը և աշխատասիրութեամբ կամենում է լրացնել հայաստանեայց եկեղեցու այդ զգալի պակասը։ Անժխտելի է և ինքն ըստ ինքեան հասկանալի, թէ որչափ քաղցր տպաւորութիւն է գործում աղօթող ծխականների վրայ հմուտ ղեկավարի ձեռքով կազմակերպուած խմբի գեղեցիկ երգեցողութիւնը. դորա ազդեցութեան ներքոյ մարդս աւելի տրամադրուած է լինում աղօթելու և առ վայր մի մոռանալով իւր առօրեայ հոգսերը, ջերմեռանդութեամբ յաճախում է եկեղեցի։ Դա, մեր կարծիքով, միակ միջոցն է ժողովուրդին դէպի սուրբ տաճար գրաւելու, քանի որ մեզանում ունիսօնական եղանակը լաւ երգիչները հազուագիւտ են, իսկ վարժ քարոզիչների ձայնը վաղուց է, որ չենք լըսում։

Ուրախութեամբ աւետում ենք, որ պ. Եկմալեանի աշխատութիւնն ամենայն մասամբ, նաև տեխնիկական կողմից մեծ գովասանքի է արժանացել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի և կայսերական Երգեցիկ Կապելլայի պրօֆեսօրներից և ուսուցիչներից, որոնցից ոմանք մինչև անգամ արտագրել են հեղինակից նորա յօրինածը. դա մեծ գրաւական է գործի յաջողութեան համար։ Միայն ափսոս, որ հեղինակի նիւթական միջոցները նորան չեն ներում իւր աշխատութիւնը տպագրութեան յանձնելու։ Մինչ մեր հայ հասարակութեան մէջ չի գտնուիլ մի մեծատուն, որ մատուցանելով այս մեծ ծառայութիւնը իւր եկեղեցուն, քաջալերէր մի և նոյն ժամանակ միհամեստ հեղինակի, որ ամենայն իրաւամբ արժանի է այդպիսի քաջալերութեան։

Մ. Շովրեան։

* * *

ԱԽԱԼՑԽԱ, յունվարի 26-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ախալցխայի գրադարան ընթերցարանը 1892 թուին ունեցել է տարեկան բաժանորդ 20 հոգի, կէս տարուայ բաժանորդ 6, ամսական բաժանորդներ միջին հաշուով իւրաքանչիւր ամիս եղել է 10—11 հոգի։ Ամսական բաժանորդների թիւն ամենից շատ եղել է ամառը. այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ օտար քաղաքներում ուսանող երիտասարդներն այդ միջոցին արձակուրդների պատճառով հայրենիք են վերադարձած լինում։ Օրական երեկոյեան հուլէկ վճարներից գրադարանը միջին հաշուով ամիսը եկամուտ է ունեցել 3 ռ. 38 կոպ. դրանից հետեւում է, որ գրադարան-ընթերցարանի յաճախորդները միջին հաշուով ամիսը եղել են 113 հոգի, իսկ օրէնը մօտ 4 հոգի։

Գրադարանից-ընթերցանութեան համար դուրս տուած գրքերի, ամսագրերի և պարբերական թերթերի թիւն է 1836։ Ցիշեալ թուից 979 կտորը հայ, ռուս և վրաց լեզուներով գրքեր են, 189-ը ամսագրեր, իսկ 668-ը այլ և այլ պարբերական հրատարակութիւնների (որոնց հաշւումն են օրաթերթերը և շաբաթաթերթերը) առանձին համարներ։

Ընթերցանութիւնը շատ քիչ է տարածուած արհեստաւորների և առհասարակ մեր ժողովրդի ստորին խաւերի մէջ։

Որպէս զի գրադարանը հասնի իւր ցանկալի նպատակին, ընթերցանութիւնն աւելի մեծ չափով տարածուի ժողովրդի մէջ և հասարակաց դառնայ, հարկաւոր է որ գրադարան-ընթերցարանը ժողովրդին մատչելի պայմաններում դրուած լինի։

Մի տարուայ փորձը ցոյց տուեց, որ գրադարանը սխալ հիմունքների վրայ է դրուած, ըստ որում նա շատ քիչ ընթերցողներ կարողացաւ առաջ բերել հասարակ ժողովրդից։

'Ի դէպ. հարկաւոր ենք համարում ասելու, որ գրադարանի ընթերցանութեան գրքերի ցուցակը լաւ չէ կազմած. մի որոշ գիրք գտնելու համար՝ հարկաւոր է երկար ժամանակ քրքրել ամբողջ ցուցակը։ Մի և նոյն անունով գիրքը մի քանի անգամ է մտած ցուցակի մէջ։

Վ. Ր.

* * *

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՑ ԳԻՒՂԵՐՈՒՄ

—

Դրագիտութեան ընկերութեան յունվարի նիստում, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրները, պ. Լ. Ստրաննոլիւբսկին ներկայացրեց մի մանրամասն ու հետաքրքրական զեկուցումն ժողովրդական լուսաւորութեան մասին Ռուսաստանի գիւղերում։ Յօդուածագիրն ունկնդիրների ուշադրութիւնը դարձրեց Ռուսաստանի ներքին նահանգների վրայ, 'ի բաց առնելով Ֆինլանդեան, Բալտեան նահանգները, Լեհաստանը և Կովկասը։ Ստրաննոլիւբսկին շատ տխուր եզրակացութիւններ է անում իւր հայրենիքի համար։

Ժողովրդական լուսաւորութեան պատկերը 1880 թուականին, երբ բոլոր դպրոցների միօրեայ զննութիւնն եղաւ, հետեւեալն է։ Բոլոր դպրոցների թիւը 18,027 էր, որոնց մէջ ուսանում էին 756 հազար տղայ և 139 հազար աղջիկ 7—14 ամեայ հասակով։ 231 քառակուսի վերստի և 11 գիւղի համար մի դպրոց էր գալի 50 աշակերտով։ Հազար մանուկներից միայն 29 էին ուսանում։ Չնայելով որ 'ի գական սեռի յարաբերութիւնն արականի հետ ինչպէս 103 : 100-ի էր, 6 ուսանող տղայի վրայ մի ուսանող աղջիկ էր գալիս։ Այս թուերը, որոնք ժողովրդական լուսաւորութեան անմխիթար վիճակի ապացոյց են, հաստատվում են և նրանով, որ 1886-ին զինուորագրութեան ենթարկուած երիտասարդների մեծամասնութիւնն անգրագէտ էր։

Երևում է, որ 141 հազար երիտասարդներից 92 տոկոսը բոլորովին անգրագէտ է եղել։ Անգրագէտ կանանց տոկոսը նոյն ժամանակ մօտաւորապէս 95 էր։ Աւելի տխուր է ժողովրդական լուսաւորութեան պատկերը, եթէ ի նկատի առնենք թուերը ըստ նահանգների և գաւառների։ Վիլնոյի նահանգում 100 տղաներից սովորում էր միայն 7 հոգի, իսկ հարիւր աղջիկներից միայն $^1/_5$ աղջիկ. Վիտեբսկի նահանգում 6 տղայ և $^1/_3$ աղջիկ։ Ցաշիրի գաւառում հարիւրից 5 տղայ և 1 աղջիկ էր ուսանում, 38 գիւղի վրայ մի դպրոց էր գալիս. Գժատի գաւառում մի դպրոց 57 գիւղերի վրայ. Նովոտորժսկի գաւառում 5 տղայ և $^1/_2$ աղջիկ, ու մի դպրոց 129 գիւղերի համար. Խօլմի գաւառում 3 տղայ $^1/_5$ աղջիկ և մի դպրոց 208 գիւղերի համար. Տօրօպեցկի գաւառում $1^1/_2$ տղայ, $^1/_3$ աղջիկ և մի դպրոց 533 գիւղերի համար։ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ 80 տոկոս անգրագէտ են համալսարան ունեցող նահանգներում, այն է՝ Խարկովի, Կիեվի և Ղազանի, նոյնպէս և այլ լինոր նահանգներում։ Համեմատաբար անգրագէտների տոկոսը պակաս է Պետերբուրգի, Տաւրիկեան, Սամարայի, Սարատովի և Օլոնեցկի նահանգներում։ Նովօուզենսկի գաւառում 100 տղաներից 57 ուսանում էր, 100 աղջիկներից—39. Կամիշինի գաւառում 54 տղայք և 39 աղջիկ. Բերդեանսկի գաւառում 40 տղայք և 13 աղջըկունք։ Ռուսաստանի սիրտը—Մոսկուայի նահանգը բնաւ չէ տարբերվում Ռուսաստանի այլ խղճուկ մասերից։

1880 թուականին սկզբնական դպրոցների համար նշանակուած էր $5^1/_2$ միլիօն ռուբլի, որոնցից $12^1/_2$ տոկոսը արքունի գանձարանիցն էր, 45 տոկոսը զեմստվօյից, 33 տոկոս գիւղական համայնքներից, $1^1/_4$ տոկոսը եկեղեցական հաստատութիւններից ու հոգաբարձութիւններից, $1^1/_2$ տոկոս թոշակ ուսանողներից, $5^1/_2$ տոկոս մասնաւոր անձինքներից և $^3/_4$ տոկոս զանազան աղբիւրներից։

Ժողովրդական լուսաւորութեան ծախքը (բիւջէն) մասնադրած էր հետեւեալ եղանակով. բոլոր ծախսերի 14 տոկոսը նշանակած էր սկզբնական կրթութեան համար, մինչդեռ Պրուսիայում նա 73 տոկոս է, Ֆրանսիայում 73%, Զուիցերիայում 79%։

Այնուհետեւ զեկուցանողը մատնանիշ արաւ, թէ որպէսզի ուսման հասակ ունեցող մանուկները բոլորեքեան ուսանին, 18 հազարի փոխարէն 155 հազար դպրոցներ են հարկաւոր, սկզբնական կրթութեան համար $5^1/_2$ միլիօնի փոխարէն 77 միլիօն ծախք է հարկաւոր։

Պ. Ստրաննոլիւբսկին համեմատելով 1880 ի թուերը 1874 և 1885-ի թուերի հետ, համոզվում է, որ ժողովրդական լուսաւորութեան գործը շատ դանդաղ է առաջ գնում, դպրոցների թիւն ու սոցա համար նշանակած գումարները շատ քիչ են աճում, և համեմատաբար ժողովրդի բազմանալուն և նորա կրթական կարօտութեան ներկայ պայմաններով անհնարին է յուսալ ժողովրդական կրթութեան ընդհանրացումն։ Իսկ եթէ իւրաքանչիւր տարի 3,250 դպրոց աւելացնելու լինին, 260 տարուց յետոյ Ռուսաստանի բոլոր բնակիչները կարող են գրագէտ լինել։

* * *

Բագուն ևս կամեցել է տօնել հայոց թատրոնի գոյութեան 35 ամեակը, ինչպէս այդ երևում է «Կասպի» լրագրում տպուած յայտարարութիւնից. Այնտեղ ևս ներկայացմանը պէտք է մասնակցէր մի օտարացի, այն է՝ ջութակ ածող Վիգիտիուն։ Ցայտնի չէ միայն թէ հասոյթը յատկացրած էր թատրոնական ֆօնդին, թէ դերասանների գրպանին։

* * *

ՃԱԼԷԹ ԳԻՒՂԻ ՀՌՉԱԿԱՒՈՐ ՎԱՆՔԸ

—

Ճալէթ գիւղում է գտնվում Նուխու վիճակի հռչակաւոր վանքը, որի մէջն է «Կոստխած Աւետարանը» և «Երեք մանկանց» մասունքները։ Նախ քան Նուխու հոգևոր կառավարութեան հաստատուելը, այդ վանքումն էր տեսնվում վիճակի հոգեւոր գործերը և քահանայական ուսումն աւանդվում։ Վանքն ունեցել է միաբանութիւն. նաև թաղուած կան եպիսկոպոսներ, հէնց մի արքեպիսկոպոս թաղուած է վանքի շեմքում, որի վրայ գրուած է «Կարապետ արքեպիսկոպոս Ս. Էջմիածնեցի, վախճանեալ է ՌՄԽԶ ամին»։ Այստեղ է իւր աթոռը հաստատել Աղուանից կաթողիկոսը երկար ժամանակ, այստեղ ևս կատարուել է ս. Մեռոնի օրհնութիւնը. մինչև այժմ էլ ժողովուրդը ցոյց է տալիս այնտեղը, ուր թաղուած է վերջին անգամ եփած ս. Մեռոնը. դրա մօտ է ամփոփուած յայտնի ճգնաւոր Յուսիկ եպիսկոպոսի մասունքը, որին շրջակայ ժողովուրդը սարսափով է մօտենում նրա սուրբ գերեզմանը համբուրելու, ըստ որում նա «Ցասման խաչ է» դարձել գաւառիս հայ և թուրք ժողովրդի համար, երաշտ տարիներում ժամ-պատարագով այդ գամբարանի վրայ ջուր են ածում և նոյն օրը անձրևում է, նմանապէս անձրևային տարիներում նորա վրայ խունկ են ծխում, իսկոյն անձրևը կտրվում, արև է անում. մի խօսքով իւրաքանչիւր պատահարից ազատող է այդ ճգնաւորի գերեզմանը։ Թորա հետ է կապուած Աղուանից պատմական երանելի և այժմեան տխրալի օրերը։

Անթիւ և անհամար եպիսկոպոսների, վարդապետների և միաբանների գերեզմաններ կան ամփոփուած այդ սրբավայրում. անդուլ ժամանակը եղծել է գրանց վրայի արձանագրութիւնները, բայց դեռ բոլորովին չէ անհետացրել։ Այն երանելի ժամանակները յաջողութեան մէջ է եղել «Կոստխած վանքը» և միաբանութիւնը. ժողովուրդը սիրով իւր լուման տալիս էր աթոռի պահպանութեան և պայծառութեան համար, հոգով, սրտով և մարմնով կապուած էր այդ նուիրական սրբավայրի հետ։ Իսկ երբ հաստատուեցաւ Նուխու յաջորդութիւնն ու հոգևոր կառավարութիւնը, այնուհետև սկսեց հետզհետէ անշքանալ «Կոստխած վանքը». վաճառուեցան վանքի ոչխարի հօտերը, ըլխինները, խոզերի երամակները, և այլն և այլն. ամեն ինչ սկսեց դէպի վատն ընթանալ։ Վանքը սկսուեց փլչել, միաբանութիւնը ցրուեցաւ, ուշադրութիւն դարձնող չեղաւ. վերջերս մի միաբան, Սարգիս վարդապետ սկսեց հոգ տանել վանքի վերանորոգութեան վրայ, ընկաւ գիւղէ գիւղ մուրալով, վանքի համար փող ժողովեց և սկսեց ձեռնարկել մի նոր վանքի կառուցման. սորան աջակից եղաւ նոյնպէս Վարդաշէնցի հանգուցեալ Առաքել Մուրադեանցը *), բայց դժբաղդաբար Սարգիս վարդապետը վախճանեցաւ, թողնելով վանքը կիսակատար։

Ցետոյ Գէորգ վարդ. Արամեանցը դարձեալ մուրալով, աղերսելով շինեց լրացրեց վանքը։ Երբ շինութիւնն աւարտեցաւ, վիճակի ժողովրդի ներկայութեամբ և մեծ հանդիսով օծելուց յետոյ ս. Կոստխած Աւետարանը» փոխադրուեցաւ նորակառոյց վանքը։ Մի քանի ժամանակից յետոյ Շուշու կոնսիստորիան հրաւիրեց Գէորգ վարդապետին ներկայանալ Ատեան. այս պատճառով մի գիշեր խեղդուեցաւ, որ գաղտնիք մնաց մեր ժողովրդի համար։ Այնուհետև վանքը Նուխու հոգ. կառավարութիւնը կապալով յանձնում էր մարդկանց տարեկան հարիւր ռուբլով և այս գումարը հասնում էր Նուխու ուսումնարանին։ Կապալառուները չէին խնայում վանքի կալուածները և շինութիւնները. երեք ընդարձակ շինութիւններ աւրուեցան, մնացել է մէկը, որ կառուցել է Շուշեցի մի պարոն, իբրև ուսումնարանի շինութիւն։ Բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ նա էլ համարեա փչանալու վրայ է։ Վանքն ունի մօտ տասն թազարի տեղ հող, որի երկու թազարի տեղը թթենի ծառերն է, իսկ մնացածները թէ խաղողի ու թէ պտուղների այգիները, նոյնպէս և երեք թազարան տեղ էլ փարելահող է։ Թթենիները տարենը վաճառվում է հարիւր ռուբլով, իսկ ո՞ւր մընաց միւս եկամուտները։ Վանքն ունի տարուայ մէջ չորս տօն. ս. Ցարութեան, ս. Աստուածածնի, Վարդավառի և Խաչվերացի օրերը շրջակայ գիւղերի բոլոր ժողովուրդը մեծ բազմութեամբ հաւաքվում են զոհերով հանդերձ ուխտ անելու։ Ս. Ցարութեան օրերը մորթվում է մօտ 60 ոչխար և 30 ռ. էլ աջահամբոյր է լինում, այդքան ևս լինում է Աստուածածնի, Վարդավառին ու Խաչվերացի օրերը։

Տարուայ մէջ վանքը եկամուտ ունի առնուազը 600 ռուբ. իսկ հոգ. կառավ. բաւականանում է միայն հարիւր ռ. ցաւալի չէ՞ մեր դրութիւնը։ Վանքի անտառները փչանում են, հետևող չկայ, երեք աղբիւրները և շատրուանը (հավուզ) չորացել է, միայն վերջերս մի բարերար իւր ծախքով բերել տուեց կտրուած աղբիւրի ջուրը, այն էլ օրամէջ է գալիս։ Ամայի է դարձել մեր սրբավայրը, ժողովուրդը գալիս տեսնում է իւր հռչակաւոր ուխտատեղը այսպիսի անշուք ու ցիրու ցան եղած, իւր գլխին «վա՜յ է» տալիս։ Ահա եօթը տարի է որ վանքը կապալով տուած է 100 ռ. տեղացի Սիմէոն Տէր-Աւագեանին. սա պէտք է վանքի գլուխը նորոգէ, երկու փըլատակուած ուխտաւորաց համար շինութիւնը շինէ ու հետզհետէ շէնցնէ այգիներն ու պարտէզոտացնէ ծառաստանը։ Բայց սա փոխանակ շինելու, եղածն էլ աւերակ է դարձընում։ Ուխտաւորները երբ հարցնում են, թէ ինչո՞ւ չէ շինում տները որ գիշերները բացօթեայ անձրևների տակ չմնան, քանի որ հարիւր ռուբլու տեղ 600 է ստանում, կապալառուն բարկութեամբ պատասխանում է, «Թէ՛ չեմ շինում, ինչ որ ձեռնեբովդ գալիս է մի խնայէք, իմ հայրս քահանայ է եղել այս գիւղում, հետևաբար վանքն էլ ինձ է պատկանում»։

Խե՛ղճ մեր ազգային սրբավայրե՛ր, ուտող ուտողի է դարձել. ազգի լումայով գոյացած վանքե՛ր ու կալուածքնե՛ր, ի՞նչ վիճակի մէջ էք գտնվում...

Վանքի բակում մի Շուշեցի պարոն շինել է երկյարկանի ուսումնարան, որ բաղկացած է երեք սենեակից. միաբան վարդապետի ժամանակ այդտեղ աւանդվում էր աշակերտաց ուսում, բայց երբ վերացուեցաւ վանահայրութիւնը, երկար ժամանակ մնացին Ճալէթեցիների մանուկները առանց ուսման։

Իսկ երբ 1884 թ. Երցախու թեմ. տեսուչը (այժմ Վահան վարդ.) եկաւ Ճալէթ, իսկոյն եւեթ բացուեցան ուսումնարանի դռները, որի մէջ սովորում էին մօտ 40 հոգի. բայց երբ տէրութեան կարգադրութեամբ փակուեցան մեր ուսումնարանները, սա ևս փակուեց ընդմիշտ։

Մերձակայ գիւղի Վարդաշէնի ուսումնարանի հոգաբարձուներն եկան Ճալէթի դպրոցի սեղանները տարան, այն պայմանով, որ սոցա որդիքն էլ կարդալու գնան այնտեղ տարեկան հինգ ռուբլու թոշակադնով։ Բայց մի տարուց յետոյ թոշակադրամը տաս ռուբլու փոխուեցաւ, հոգաբարձուները Ճալէթեցի երեխաներին դուրս արին դպրոցից՝ ասելով որ առաջ տասը ռուբլին բերէք, յետոյ ընդունենք ձեզ։ Այս անօրէնութիւնը տեսնելով Ճալէթեցիք քանիցս խնդրեցին, որ անողոք չվարուին, բայց հոգ. խոստաբարանոց եղաւ։ Նոքա էլ ճարահատեալ լռեցին և ուսման ծարաւ մանուկներն այժմ պարապ-սարապ փողոցներն են չափչփում, ոմանք էլ խողարած ու տաւարած են դարձել։

Փա՜ռք ու պարծանք Վարդաշէնի հոգաբարձուներին, որ Ճալէթեցիներին բարերարութիւն արին։

Ահա մօտ 15 տարի է, որ սեպհական քահանայ չկայ Ճալէթում. Հոգևոր կառավարութիւնը օտար քահանայ է նշանակել. նա էլ միշտ իրանց գիւղում լինելով, տարենը երեք անգամ է ժամ ասում Ճալէթում, ըստ որում «բարոյական» գործերով է զբաղուած։ Նախկին յաջորդը լաւ ծանօթ է մեզ, շատ էլ ափսոսացել է վանքի փչանալու վրայ, այժմ սինօդի անդամ է, յոյս ունինք, որ շուտով մեր վանքի համար վանահայր կ'ուղարկէ, և վանքի փակ դռները կը բացուին և նրա մէջ կը լիշուի սրբոց «ալէլուն». . .

Պրօմ-դրու։

*) Սա իւր ծախքով շինեց Վարդաշէնի ս. Աստուածածնին եկեղեցին, որի վրայ 15,000 ռուբլի է ծախսուել։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Ֆրանսիական գիտնական դը-Մելին նորերումս զեկուցում է արել Փարիզի Գիտութեանց ճեմարանի նիստում Փիլոքսերայի դէմ մաքառելու մի նոր միջոցի մասին։ Այս «նոր» միջոցը նշանաւոր է այն տեսակէտից, որ արդէն յայտնի էր ամենահին ժամանակներում։ Պ. դը-Մելին այս միջոցի նկարագիրը գտել է Ստրաբոնի մէջ (Geographia, lib. VII, cop. 8.)։ Այս միջոցի առանձնայատկութիւնն այն է որ գործ է դնվում Ռոդոս կղզու ասֆալտ պարունակող հողը։ Խաղողի այգիները շրջապատվում են այդ հողով և՝ դը-Մելիի ասելով, որ փորձել է արել, խաղողի որթերն աւելի ուժեղ են դառնում և մի և նոյն ժամանակ ազատվում են ֆիլօքսերայից, գինեգործութեան այս ժամանակակից պատուհասից։

Նորերումս վախճանուած Զօրիլլա բանաստեղծը, որին կոչում էին «Սպանիայի Վիկտոր Հիւգօ» իւր ամենամեծ վարձադրութիւնն ստացել է իբրև թատերագրող։ Անգլիական թերթերի ասելով իւր «Դօն-Ժուան Տենօրիօ» ողբերգութեան ներկայացումներից նա իբրև հեղինակ վարձ ստացել է 100,000 ֆունտ ստերլինգ, այսինքն մէկ միլիօն ռուբլի։ Այս ողբերգութիւնն առաջին անգամ ներկայացուած է եղել 40 տարի առաջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵԶՈՒՆԵՐՆ ԱՐԱԳ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԻ ՆՈՐ ՄԵԹՈԴ

—

Յայտնի անգլիացի հրապարակախօս Ստէդը իւր գերդաստանի մէջ մի հետաքրքրական մանկավարժական փորձ է արել, որ և նկարագրել է Review of Beviews լրագրում։ Խօսքը լեզուներ ուսանելու մի նոր եղանակի մասին է, որ առաջարկում է Գուէն Ֆրանսիացին։ Այս եղանակի հիմունքը հետևեալն է. մանուկները սովորում են խօսել, միշտ գործողութիւնը կամ առարկան կապելով այն վանկական ձայնի հետ, որ արտայայտում է նոյն գործողութիւնը կամ առարկան։ Օտար լեզու ուսանելու համար հարկ է վարուել նոյնպէս. մի կողմ թողնելով գրքերն ու տետրները, բացառապէս պէտք է գործ դնել բերանացի դասատուութիւն և միշտ յայտնիից անյայտին անցնել, կապելով լսելով սովորած խօսքն այն առարկայի հետ, որի նշանակն է նա, Այսպէս աշակերտը սովորում է մտածել այն լեզուով, որ ուսանում է. և սա միակ միջոցն է, որպէս զի երեխան կարողանայ օգուտ քաղել լեզուից։ Գուէնը և նորա հետևողները երաշխաւորում են, որ այս եղանակով վեց ամսուայ ընթացքում միջակ ընդունակութեան տէր մանուկը կ'սովորի ամեն լեզու և այն՝ գործնականապէս, այնպէս որ նա նոր ուսած լեզուով կը խօսէ ինչպէս իւր մայրենի լեզուով։

Այս հանգամանքն աւելի գրաւիչ է այն պատճառով, որ ամեն մարդ գիտէ փորձով, թէ որպիսի չնչին հետեւանքների են հասնում մանուկները հասարակական դպրոցներում հինգ կամ վեց տարի ուսանելուց յետոյ։

Ստէդը հինգ զաւակ ունէր, որոնց աւագը 18 տարեկան էր, իսկ կրտսերը 9 տարեկան։ Առաջին երեք զաւակները փոքր ինչ սովորել էին ֆրանսերէն, հին մետոդով, իսկ վերջին երկուսներից առաջինը շատ քիչ յառաջադիմութիւն էր անում ուսանելով չոր ու ցամաք մետոդով, միւսը բնաւ չգիտէր ֆրանսերէն։

Փորձը հետևեալն էր. հինգ զաւակներն էլ գտնվում էին ֆրանսիացի դաստիարակի ղեկավարութեան ներքոյ (որ դասախօսում էր Գուէնի մետոդով), ընթացս 6 ամսուայ պարապելով իւրաքանչիւր օր 2 ժամ, շաբաթը հինգ անգամ, առանց այլ զբաղմունքների ընդհատելու։ Վեց ամսից հետ հետևանքն ստուգուեցաւ քննութեամբ։ Ստէդը իւր ծրագիրը հաղորդեց ընթերցողներին ճիշդ վեց ամիս առաջ և ներկայումս նա մանրամասն հաշիւ տուեց թէ ինչ արդիւնք են ձեռք բերած իւր զաւակները։ Քննիչները եղել են արժանահաւատ ուսուցիչներ։ Քննութիւնը տևել է 4 ժամ։ Եւ այն հասարակ քննութիւն չէր, որ երևում է նախընթացաբար պատրաստած նորա ծրագրից.

1) Ֆրանսերէն լեզուով անուանել այն առարկան, որ քննողին ցոյց է տրվում։

2) Ֆրանսերէն արտայայտել որոշ գործողութիւնը կամ շարժուածքը։

3) Ֆրանսերէն կրկնել քերականական կանոնը, որ բացատրում է ուսուցիչը։

4) Կրկնել ֆրանսերէն ուսուցչի կարդացած յօդուածը։

5) Ֆրանսերէն պատմել իւր կեանքից մի դէպք, որ վերաբերում է այն շրջանին, որի վրայ մատնացոյց է անում քննիչը։

6) Կարդալ մի յօդուած ֆրանսիական լրագրից կամ որևէ գրքից և ֆրանսերէն պատմել կարդացածը։

7) Եթէ մի միտք արտայայտելու համար չէ գտնում իսկական խօսքը, բացատրել այն միտքը այլ խօսքերով այնպէս, որ հասկանալի լինի։

8) Անծանօթ խօսքը գտնել բառարանում և սորա օգնութեամբ խելամուտ լինել նորա նշանակութեան։

9) Անծանօթ խօսքի բացատրութիւնը հարցնել ֆրանսերէն լեզուով։

10) Կրկնել ֆրանսերէն անգլիական լեզուով արած պատմութիւնը կամ բացատրութիւնը։

11) Պատմել ֆրանսերէն, թէ ինչպէս պէտք է վարուել Ֆրանսիայում որոշ պարագաներում (օրօրինակ երկաթուղու կայարանում կամ որևէ հիւրանոցում)։

12) Բացատրել ֆրանսերէն նկարի կամ պատկերի բովանդակութիւնը։

13) Ուսուցչի սկսած պատմութեան վերջաբանութիւնն անել յանպատրաստի ֆրանսերէն լեզուով։

14) Ընդարձակօրէն արած բացատրութիւնը ֆրանսերէն լեզուով համառօտել։

15) Երկու անգամ նոյն պատմութիւնը զանազան ձևով անել։

16) Ֆրանսերէն լեզուով հաշիւներ անել։

17) Նկարագրել ֆրանսերէն այն մըտքերն ու պատկերները, որ զարթեցնում է երևակայութեան մէջ ուսուցչի ասած նախադասութիւնը կամ խօսքը։

18) Քերականական վերլուծումն անել մի նախադասութեան։

19) Թարգմանիչ լինել երկու անձանց մէջ, որոնցից մէկը ֆրանսերէն չգիտէ և միւսը անգլիերէն։

20 Ֆրանսերէն կրկնել երկու անձանց անգլիերէն խօսակցութիւնը։

21) Ապացուցանել, որ ֆրանսերէն լեզուով տուած դասը հասկացել է։

22) Օգնել ուսուցչին փոքր աշակերտներին ֆրանսերէն քերականութեան կանոնները բացատրելիս։

23) Օրինակներով բացատրել քերականական կանոնները։

24) Գրել ֆրանսերէն հասարակ նամակ (ոչ տեխնիկական)։

Այժմ կարելի է ամեն քննիչներին հարց առաջարկել, թէ մասնագիտական դպրոցների կանդիդատներից քանի՞սը տասնամեայ ուսումնառութիւնից յետոյ կարող կը լինին բաւարարութիւն տալ այս բազմակողմանի պահանջներին ֆրանսերէն կամ գերմաներէն լեզուով։ Այսպիսի պահանջներ լինում են միայն կենդանի լեզուների մասնագիտական ուսումնասիրութեան ժամանակ։ Իսկ Ստէդի զաւակները, սկսած կրտսերից մինչև աւագագոյնը, յաղթող հանդիսացան այս դժուարութեանց։ Նոքա ազատօրէն խօսում էին ֆրանսերէն, կարդացին լրագրական յօ-

գուած և մի երես Մօնտէ-Կրիստոյից, կրկնեցին անեկդոտը, յանպատրաստից պատմութիւն պատմեցին, նամակ գրեցին, քերականական կանոն բացադրեցին, պաշտպանեցին հիւրանոցում կոտլէտ և թատրոնում աթոռ: Նկատելի էր և այն, որ կրտսերը, որ բնաւ ֆրանսերէն ուսած չէր գրքով, աւելի մեծ յաջողութեամբ օգուտ էր քաղած բերանացի դասաւանդութիւնից: Նորա արտասանութիւնն աւելի կանոնաւոր էր և նա լաւ գիտէր ֆրանսերէն մտածել:

Ընդհանրապէս փորձը ցոյց տուեց, որ այդպիսի կարճ ժամանակում ոչ մի այլ մեթոդ չէ կարող աւելի արդիւնք ցոյց տալ, մանաւանդ վերաբերութեամբ ուսումնասիրութեան այնպիսի դժուար լեզուին, որպիսին է ֆրանսիականը:

Յայտնի բան է այս մեթոդի մէջ ոչինչ անսովոր բան չկայ, նոր լեզուներ սովորելու միակ բնական և տրամաբանական մեթոդն է բերանացի ուսանել լսելիքով: Մինչև իսկ կարելի է զարմանալ, որ այս նոր գիւտ է համարվում:

Աւելորդ չէր լինել ստուգել, թէ որքան գործադրելի է այն մեթոդը դասատանց մէջ, ուր բազմաթիւ են աշակերտները: Ոչ պակաս հետաքրքրական է ստուգել, թէ արդեօք չէ՞ր կարելի նոյն մեթոդը գործ դնել և մեռած լեզուների ուսումնասիրութեան ժամանակ:

Յայտնի է, որ մեր ժամանակակից հումանիստները վերածնութեան ժամանակի հումանիստներից շատ յետ են մնացել: Բայց եթէ ուսուցիչները հրաժարվում են խօսելու Դեմոսթենէսի կամ Կիկերոնի լեզուներով ինչպէս առաջ էր լինում, դորա պատճառը գլխաւորապէս այն է, որ նոքա չգիտեն ազատ խօսել այդ լեզուներով: Գուցէ ժամանակ է ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքի վրայ, թէ որպիսի անմտութիւն է տասնեակ տարիներ կորցնելը, որպէսզի չսովորենք ոչ կենդանի և ոչ էլ մեռած լեզուները, մինչդեռ հնարաւոր է բնական մեթոդի օգնութեամբ վ'ց ամսուայ ընթացքում հասնել բոլորովին հակառակ հետևանքների:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՒՍՏՐԻԱ.—«Գալիչանին» թերթը հաղորդում է, որ Լեհաստանի վերջին բաժանման տարեդարձի օրը Լեմբերգում տեղի են ունեցել մի շարք ընդհարումներ արհեստաւորների, որոնք չեն կամեցել պահել ազգային սուգը, և համալսարանի և համալսարանական ուսանող երիտասարդների մէջ: Վերջիններս յայտնել էին, որ տարեդարձի օրը բոլոր զուարճութիւններն արգելուած են և խմբերով՝ հագուստները փոխած և դիմակները երեսին՝ մտնում էին այն բոլոր մասնաւոր տները, ուր նոցա կարծիքով չէր պահպանվում ազգային սուգը: Մի յարձակում գործուեցաւ նաև Լեմբերգի «Գվիազդա» կոչուած արհեստաւորաց ընկերութեան վրայ այն միջոցին, երբ այնտեղ պարահանդէս էր յօգուտ արհեստաւորների այրիների և որբերի:

ԳԵՐՄԱՆԻԱ.—Բազմաթիւ գերմանական լրագրներ, ի թիւս որոց և «National Liberale Correspondenz» «Köelniche Zeitung» և «Börsen-Courrier» հաղորդում են, որ Բեռլինում ընդհանուրի ուշադրութիւնը դարձրեց իւր վրայ այն փաստը, որ Թագաժառանգ Ցեսարեվիչի և Վիլհելմ կայսեր միջև տեղի են ունեցել երկարատև և շատ գաղտնի խօսակցութիւններ: Այն հանգամանքը, որ Բարձր Հիւրը Բեռլինում աւելի երկար ժամանակ մնաց, քան թէ վճռուած էր նախապէս, ապա հարսանեաց օրը Թագաժառանգի և կայսեր մէջ եղած երկու ժամ խօսակցութիւնը, վերջապէս Նորին Կայսերական Բարձրութեան Բեռլինից մեկնելուց առաջ կէս ժամեայ առանձին խօսակցութիւնը,—այս բոլորը լիշեալ թերթերի կարծիքով, համարվում է ոչ միայն անձնական մտերմական յարաբերութիւնների նշան, այլ և մի ապացոյց թէ դոցա մէջ այնպիսի յարաբերութիւններ են հաստատուել, որոնք զուրկ չեն քաղաքական նշանակութիւնից:

ՖՐԱՆՍԻԱ. — Պանամայի գործի քննութեան միջոցին դատարան կոչուած էին նաև բաժնետէրերը: Առաջ ենք բերում այստեղ փօլլի շինականի ցուցմունքները: Արդէն Պանամայի 250 պարտատոմսերի տէր լինելով նա 1888-ին եղել է Նիցայում, ուր Լըսեպսներից կազմակերպուած դասախօսութիւն է եղել Պանամայի ապագայի մասին: Լըսեպս-հայրը խոստացաւ թէ ջրանցքը կը բացուի 1890 թուին և որ 200 հազար նոր պարտատոմսեր արդէն ստորագրուած են, այնպէս որ համարեա թէ ոչինչ չէ մնացել: փօլլին դարձեալ 50 պարտատոմս ձեռք բերեց և ապա սորանից քիչ ժամանակ անցած, երբ աննպաստ լուրեր արածուեցան, գնաց Փարիզ Փ. Լըսեպսի մօտ, որին յայտնեց իւր կասկածները: Լըսեպսը հարցրեց նորան թէ երևի կարդում է իրանց թշնամի «Պանամա» լրագիրը և դրական պատասխան ստանալով ասաց.

—Ինչպէս կարող է ձեզպէս ազնիւ մարդը կարդալ մի թերթ, ուր գրում են ստորահոգի մարդիկ կաշառուած անգլիացիներից, որոնք կամենում են բաժնետոմսերի գինը վայր ձգել, նոցա չնչին գումարով գնելու համար և ապա Պանամի ջրանցքը ձեռք ձգել: Մի՛ ծախէք ձեր թղթերը, եթէ պահէք, ժամանակով լաւ կարողութիւն կ'ունենաք:

Երբ Պանամայի ընկերութիւնը սնանկացաւ փօլլին, նորից գնաց Փարիզ և դիմելով Լըսեպսին յայտնեց թէ Պանաման քանդեց նորան:

—Ի՞նչ ինչ, որ Պանամայի գործը տապալուեցաւ,—պատասխանեց Լըսեպս-հայրը:

—Դուք Գողիաթ էք, իսկ ես մինչև անգամ Դաւիթ չեմ,—ասաց նորան սնանկացած շինականը, բայց ես ձեր «մեծ ֆրանսիացի» անունը ցեխի հետ կը խառնեմ:

Լըսեպսի որդին, որ ներկայ էր, յարձակուեց անմիջապէս փօլլիի վրայ և բռնեց պարանոցից, բայց յաղթանդամ գիւղացին յետ մղեց նորան:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Յունվարի 26-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.-«Գրաժդանինը» հաղորդում է, որ դատաստանական պալատը հրատարակէ իշ. Մեշչերսկուն գինուորական բժիշկների կոչումն անպատուելու համար դատապարտեց 6 շաբաթուան բանտարկութեան:

ՓԱՐԻԶ.—Կավենեակի առաջարկած օրակարգը պատգամաւորների ժողովում ընդունելու համար նախարար Բուրժուանն ուզում էր հրաժարական տալ, բայց ընկերների թախանձանքին լսելով հրաժարուեց դրանից:

Ռիշարը պատգամաւորների ժողովում պահանջեց, որ կառավարութիւնը վերադարձնէ Ռէյնակին այն գումարները, որ տուած է եղել Ռուվէին գաղտնի ֆօնդի համար. ժողովը որոշեց քննութեան առնել այդ առաջարկութիւնը:

Նախարարութեան հրաժարականի մասին եղած լուրը հերքվում է, հաւատացնում են միայն այն՝ որ կառավարութիւնը մտադրվում է հէնց առաջին դէպքում պահանջել ժողովից, որ նրա դէպի նախարարութիւնն ունեցած վստահութիւնն աւելի որոշ կերպով յայտնէ:

Յունվարի 29 ից.

ՆԱՐՍԷՅԼ.—Երէկ 9-ը հոգի մեռաւ կասկածաւոր մահով, բժիշկների կարծիքներն այդ մասին տարբերվում են միմեանցից:

ՓԱՐԻԶ.—Պանամայի գործի համար դատապարտուած են Ֆերդինանդ և Շարլ Լըսեպսները 4 տարի բանտարկութեան և 3,000 ֆրանկ տուգանքի, Ֆօնտանը և Կոտտիւն 2 տարուայ բանտարկութեան և 3,000 ֆրանկ տուգանքի խարդախութեան և հաւատարմութիւնն ի չարը գործ դնելու համար:

Էյֆէլը հաւատարմութիւնն ի չարը գործ դնելու մէջ յանցաւոր է ճանաչուած. նա ևս դատապարտուած է 2 տարուայ բանտարկութեան և 20,000 ֆրանկ տուգանքի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երէկ Բուխարայի էմիրը ճանապարհ ընկաւ Պետերբուրգից:

Ելևմտից նախարարը կարգադրութիւն է արել, որ արքունական բանկը 1893 թուի փետրվարի 1-ից մինչև օգոստոսի 1-ը երրորդ վճակախաղի տոմսակների գրաւականով փոխ տայ մինչև 160 ռուբլի իւրաքանչիւր տոմսակին տարեկան 4% հաշուելով:

ԼՕՆԴՕՆ.—Փետրվարի 1-ին Ամերիկայի Միացեալ-Նահանգների դեսպանը յայտարարեց, ըստ ցանկութեան ժամանակաւոր գլխաւոր կառավարութեան, ամերիկական խնամակալութիւնը Սանդվիչեան կղզիների վրայ՝ մինչև կը վերջանան ամերիկական կառավարութեան և Գավայեան պատգամաւորների միջև բանակցութիւնները: Բրիտանական դեսպանը ճանաչեց ժամանակաւոր կառավարութեան օրինաւորութիւնը մինչև այդ մասին Լոնդօնից հրահանգ ստանալը:

ՓԱՐԻԶ.—Պանամեան ընկերութեան կառավարիչների մասին դատավճիռը խիստ են գտնում լրագրները, մանաւանդ Ֆերդինանդ Լըսեպսի վերաբերմամբ. «Figaro»-ն պահանջում է ներումն շնորհել նրան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

(Յունվարի 26-ին)

	Ռ. Կ.
Լօնդօն 10 փունտն արժէ . .	96 80
Բեռլին 100 մարկը — . . .	47 50
Փարիզ 100 ֆրանկը — . . .	38 $42^1/_2$
Ոսկին — — — արժէ . .	7 78
Մաքսային կտրոններ — . .	155 25
Արծաթ — — — . .	1 10
Բորսային վեղչ — — 4% $5^1/_2$—%	
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	102 50
— — — 2-րդ —	103 50
— — — 3-րդ —	» — »
— — — 4-րդ —	» — »
— — — 5-րդ —	» — »
— — — 6-րդ —	103 —
6% ոսկեայ ռէնտա	162 55
4% ոսկեայ փոխառութիւն . .	— —
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— —
— — — 2-րդ	103 62
— — — 3-րդ	104 12
Ներքին 5% առաջին փոխառ.	241 75
— — երկր. րդ —	228 50
Պետական. երկաթուղային ռէնտա	104 —
$5^1/_2$ ռէնտա	— —
4% ներքին փոխառութեան.	93 87
5% գրաւ. թղթ. Ազն. կալ. բանկի.	101 12
Արք. Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . .	195 75
Պետերբուրգի քաղաքային վարկի ընկերութ. պարտատոմսեր	101 62
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —	101 62
Օդեսայի — —	— —
Թիֆլիսի — —	— —
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկ.	— —
— — Քութայիսի	— —

Բորսայի տրամադրութիւնն ամուր է:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի:
Դ. Գ. ՌՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11^1/_4$—$12^1/_2$ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—$12^1/_4$—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.
Ի. Վ. ՁԷՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Բժիշկ-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի:
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան:
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7^1/_4$ ժ. ականջի, կոկորդի, քթի և ներգային ց. (ելեքտրաբուժութիւն և մարգումն):
Վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նախասարդեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ Է
ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ
ԳԻՐՔԸ
Հրատար. «Ձիրակ» գրավաճառանոցի:
Աշխատ. Գ. ԼԵՒՈՆԵԱՆ
Բաղկացած է 150 մեծադիր երեսներից, 200-ից աւելի մեր ժողովրդական բանաստեղծ-երգիչների (գուսան աշուղ) կենսագրութիւններ և երգեր: Ժամանակագրական կարգով սկզբից մինչև մեր օրերը: Գինն է 30 կոպ. ճանապ. ծախսով 40 կոպ.: Դիմել՝—Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոց», — Աղէքսանդրապօլ «Ձիրակ» գրավաճառանոց:
(8) (5—2)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
և շուտով լոյս կը տեսնի
ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Աշխ. Գիւտ քահ. Աղանեանց:
Յանկացողները վաղօրօք կարող են ստորագրուել Կենդրոնական Գրավաճառանոցում, վճարելով իւրաքանչիւր օրինակի համար 1 ռ., տպուելուց յետոյ կ'արժենայ 1 ռ. 50 կ.:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Երկրորդ հատոր
ԳԻՆՆ Է 60 Կ.
Դիմել՝ Թիֆլիզ, Կենդրոնական գրավաճառանոցին կամ հեղինակին՝ Норашенская ул. д. № 28.
(5) (3—3)

Ուսուցչական ցենզ ձեռք բերել ցանկացող ուսուցչուհիներին և ուսուցիչներին առաջարկվում է դիմել Թիֆլիզ տիկին Ոսկեհատ Տէր-Յովհաննիսեանին (Միքայէլեան փողոց, Թանդոյեան եկեղեցու տուն) կամ ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեանին (Միքայէլեան փողոց, սեպհական տուն №65) իրանց ուսուցչական վկայականներով:
Ուսուցչուհիները և ուսուցիչները քննութեան պատրաստուելու համար լինելիք վճարովի դասեր են:
(Խ.) (3—3)

Ոսկէ մեդալ Թիֆլիզ 1889 Թ. Ոսկէ մեդալ Կազան 1890 Թ.
Դ. Զ. ՍԱՌԱՋԵՒԻ
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ
ԹԻՖԼԻԶՈՒՄ
ՀԱՅԻ ԱՐԱՂ, ՍՊԻՐՏ, ԿՕՆԵԱԿ, ՌՕՄ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼԻԿԵՕՐՆԵՐ:
Պէտք է դիմել.—Въ главную контору Д. З. Сараджева въ Тифлисѣ.
(117) (50—29)

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻ
ԲՐՈՒՍԱՅՈՒՄ (Տաճկաստան)
ԲՋՋԱՒՈՐ ՀԱՏԻԿՆԵՐ
(ЦЕЛЛЮЛЯРНАЯ ГРЕНА)
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻԻ
Ինչպէս արդէն յայտնի է Կովկասի շատ շերամաբուծներին, տալիս է ամենաառողջ որդ, իւրաքանչիւր մխալը մօտ 35 ֆունտ թաց սպիտակ բոժոժ: Ծախվում է քառակուսի արկղիկներով, որոնցից իւրաքանչիւրի մէջ $7^1/_2$ մսխալ, Կայսերական Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան բնակարանում. մսխալն արժէ 75 կ.: Մեծ քանակութեամբ գնել ցանկացողները կարող են դիմել Տփխիս՝ Դվորցովոյ փողոց Աղնուականաց հողային բանկի քարվանսարայում № 128, Զաքաթալա՝ Եղբ. Պասխալիդիի գրասենեակում:
(9) (12—1)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
տեղեկացաւ, որ ջրկիրներից ոմանք բնակիչներին ջուր են մատակարարում վեդրոյի համար նշանակած $^3/_4$ կոպէկ սակագնից բարձր գնով, ուստի Քաղաքային Վարչութիւնը խնդրում է քաղաքիս պ.պ. բնակիչներին՝ ջրկիրների կողմից տեղի ունեցած ամեն այդտեսակ զեղծումների դէպքում դիմել ուղղակի Քաղաքային ջրմուղի գրասենեակը:
(13) (3—1)

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՆՕՏԵՐԻ
Մատակարար Արքունի թատրոնի և Արտիստիք. ընկերութեան,

ՌՈՅԵԱԼՆԵՐ
ԵՒ
ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Պետերբուրգի գործարաններից
Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ—արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻԴԵՐԻԽԻ և ՍՄԻՏԴ ՎԵԳԵՆԵՐԻ: Ինչպէս լիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դեպոյում ունիմ մեծ քանակութեամբ ռոյեալներ և դաշնամուրներ:
Ջութակներ, ալտեր, վիօլոնչելներ, կոնտրբասներ, կիթառներ, ֆլէյտաներ, կլառնետներ, լարեր, նօտեր և երաժշտական գործիների բոլոր պարագաներն առաջարկում եմ մեծ քանակութեամբ: Գները գործարանային: Վաճառում եմ հատով և մեծ քանակով: Գները կարելի է վճարել մաս առ մաս: Օտարերկրացիների պահանջները կատարում են անմիջապէս: Գնած իրերն ընդունում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների սակագնով:
Музыкальное депо Б. Мириманяна.
Тифлисъ, Дворцовая ул.
(62) (20—19)

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Января 1893 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի: Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2